

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀԼԱԻՈՒՆԻՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՒՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Արշակունեաց թագաւորութեան շրջանին եւ անկէ առաջ Հայաստան բաժնուած էր բազմաթիւ իշխանութիւններու։ Այս բաժանումէն առաջ եկած են մեր երկրին մէջ ցեղային խմբաւորումներ, որոնք նախարարութիւններ կը կոչուէին։ Ամբողջ Հայաստանի հողը բաժնուած էր այս նախարարական տուներու միջեւ. անոնք իրենց ինքնուրոյն ներքին կազմակերպութիւնները ունէին, հիմնուած ընդհանրապէս իրաւունքի եւ սովորոյթի վրայ. անոնք փոքրիկ կառավարութիւններ էին եւ իրենց երկիրը կը կառավարէին իրենց յատուկ օրէնքներով, մանաւանդ զստական հարցերու մէջ։

Ամէն նախարար հինէն ժառանգ ստացած էր հողամաս մը, եւ իրենց երկրին տարբերութեան համաձայն՝ տարբեր ալ սուլորութիւններ ունէին :

Անոնք իրենց քաղաքներն ու գիւղերն ունէին, բերդերն ու ամբոցները, եւ իրենք իրենց ուժերով կը պաշտպանէին իրենց երկրին սահմանները, օտար ոտնձգութիւններու դէմ: Մեր հին պատմութեան աղբիւրներուն հաղորդած տեղեկութիւններուն համաձայն, Հայաստանի մէջ, ժամանակի ընթացքին, կամաց կամաց, մասնաւորապէս Արշակունեաց թագաւորութեան շրջանին, զարգացեր եւ կադմուեր են նախարարական կամ աւատապետական տուները: Այս նախարարները կալուածատէրեր էին, որոնք ոչ միայն երկրին պաշտպանութեան հոգը ունէին, այլ եւ ներքին կազմակերպութեան, անոնք կը կառավարէին երկիրը, դատաւորներ էին, կը դատէին, կը պատժէին, մէկ խօսքով լիակատար պետեր եւ իշխաններ էին իրենց երկրի սահմաններուն:

Այս աւատապետական կազմի գլխաւոր յատկութիւնները ունէին Արշակունեաց Հայաստանի նախարարական կազմակերպութիւնները, որոնք իրենց երկրին մէջ ունէին քաղաքական իշխանութիւն եւ ամէն

տեսակ իրաւունք: Մեր երկրին նախարարական ազնուական բարձր
դասակարգը կը համապատասխանէր Եւրոպայի Սէնթօններուն, կամ
Ֆէօտալներուն, անոնք մեր երկրին մէջ ճախարարներ կը կոչուէին¹:

Մեր պատմիչները՝ Հայաստանի այս իշխանները, ինչպես ըսինք,
«Նախարարք», «Նախարարադունք», «Ազգք», «Տոհմք» կամ «Տունք
նախարարաց» կը կոչէին, եւ իրենց իշխանութեան տակ գտնուող եր-
կիրն ու իշխանութիւնը՝ «Նախարարութիւնք»:

«Նախարար» բառի ստուգաբանությունը եւ ծագումը, երկար ժամանակ մոլթ եւ անհասկնալի մնացեր է, կ'ըսէ Յ. Մանանդեան։ Հնախօս Հ. Ղ. Ինճիճեանի համաձայն «անունն ՆԱՍԱՐԱՐ, ինքնին յայտ առնէ ածանցեալ յանուանցս, ՆԱՍ եւ ԱՐԱՐ. իբր նախկին ի յարարս կամ նախակարգեալ իշխան, որպէս եւ էր առ լատինս, անունս ԲՈՒԷՖԻԳԻՈՒՍ, ցուցանէ զյառաջագահութիւն եւ զնախագահութիւն քան զայլս»²։

Մ. Էմին եւս ընդունած է Ինճիճեանի այս բառին մեկնութիւնը․ սակայն Ն. Մառ մերժեց այս ստուգարանութիւնը եւ ըսաւ թէ նախարար բառը առաջ եկած է պարթեւերէն nafadara բառէն, որու սկզբնական ձեւը Հայոց քով եղած է ՆԱՀԱՐԱՐ, սակայն ժողովուրդին բերնին մէջ ՆԱՀ-ը եղած է ՆԱՍ, եւ Նահարարը՝ Նախարար, վուրդին բերնին մէջ ՆԱՀ-ը եղած է ՆԱՍ, եւ Նահարարը՝ Նախարար, որ Մառի կարծիքով կը նշանակէ երկրի մը շրջանի տէրը, գլխաւոր Մառի կարծիքով կը նշանակէ Nafadar, կազմուած է Nafa-էն՝ որ կը նշանակէ «պորտ», «ցեղ» եւ Dar «պետ» եւ «գլխաւոր»³:

Նախարարութիւնները, ինչպէս ըսինք, Հայաստանի մէջ, իրենց մեծութեան եւ ծաղուծին համաձայն կը տարբերէին իրարմէ, ինչպէս Սէնեթորները Եւրոպայի մէջ:

պէս ՍԷՆՅօրները եւրոպայի մէջ:
Նախարարներու մէջ առաջին բարձր տեղը կը գրաւէին ԲԴԵՇԸ-
ՆԵՐԸ, որոնք ընդարձակ հողերու տէրեր էին, որոնց հողերը ընդ-
հանրապէս կը դառնուէին Հայաստանի սահմաններուն վրայ. իրենց
պարտականութիւնն էր պաշտպանել Հայաստանի սահմանները թըշ-
նամիններուն դէմ. անոնք կը կոչուէին Սահմանակալ, նաեւ Սահմա-
նապախի եւ Կողմնապախի կամ Կողմնակալ: Ըստ վկայութեան Ազա-
թանգեղոսի. «Զառաջին սահմանակալն ի նոր Շիրական կողմանէն,
եւ երկրորդ սահմանակալն՝ յԱսորեստանեաց կողմանէն, երրորդն՝
յԱրուեստական կողմանէն, չորրորդն՝ ի Մազբթաց (Գուգարաց)
կողմանէն»⁴: Արշակունեաց թագաւորութեան շրջանին փաւստոս Բիւ-

1. ՄԱՆԱՆԴԵԱՆ Թ., ֆնական տեսության հայ ժողովրդի պատմության, Երևան, 1957, հտ. Բ., մասն Ա., էջ 314-315:
Ե. Բախտյանի, հտ. Բ., էջ 77:

2. ԻնժինեՐԱՆ Հ. Ղ., Հնախօտութիւն Հայաստանի, Հմ. Բ. 32. 1957.
3. ԼՐԱՆԱՆԿԵԱՆ Յ., Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմ., Երևան, 1957.

4. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Պատմաբիւմ, Վենետիկ, 1930, էջ 643:

Թիւնը Հայաստանէն վերցնելու համար աշխարհաժողով մը կը դու-
մարուի: «Առնոյր այնուհետեւ խորհուրդ հաւանութեան ընդ թագա-
ւորին եւ ընդ իշխանսն, նախարարօքն եւ զօրօքն հանդերձ, վասն
խաղաղութեան... քակել, կործանել, բառնալ զգայթացութիւնսն ի
միջոյ ի բաց կորուսանել...»¹⁵: Նոյն «աշխարհաժողով խորհուրդը»
կը դուժարէին երբ պէտք կար պատերազմ ընելու կամ դադրեցնելու.
«Ապա ժողովեցան մարդիկ ամենայն աշխարհին իշխանութեանն թա-
գաւորութեանն Հայոց... մեծամեծք նախարարք, դասապետք, կողմ-
նակալք, դաւառատեարք, գործակալք եւ դասապետք շինականաց»¹⁶:

Նոյնպէս աշխարհաժողով կ'ընէին պատերազմի ժամանակ ուրիշ
պետութեանէ մը օգնութիւն եւ աջակցութիւն խնդրելու. «Ապա առա-
ւել ժողովեցան ի մի ժողով միաբանութեան աշխարհին Հայաստան
երկրին. նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհա-
կալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք... այլ եւ
ի շինականաց անգամ ռամիկ մարդկան... վասն օգնականութեան եւ
ի թիկունս իւրեանց գտանելոյ»¹⁷:

2. ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՍԿՁԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Տեսանք նախարարներու գոյութիւնը եւ անոնց կատարած դերը
մեր երկրին մէջ: Հետաքրքրական է այժմ գիտնալ թէ ինչպէս ծա-
գած եւ սկիզբ առած են մեր նախարարութիւնները: Անոնց ծագումը
մեր երկրին մէջ՝ ըստ Խորենացիի, ուղած է գիտնալ առաջին անգամ
նաեւ Պարթեւներու Վաղարշակ թագաւորը, «ուստի՞ իցեն նախա-
րարութիւնքս, որ աստ կան...»¹⁸: Վաղարշակ Նինուէ կը զրկէ Մար
Աբասը՝ որ հոն գտնելով ազգերու պատմութիւնը, կը քաղէ անկէ
հայ նախարարներու ծագումի պատմութիւնը:

Աւելի ուշ ժամանակով Սահակ Բագրատունի եւս կը խնդրէ Խո-
րենացիէն, որ իրեն տեղեկութիւններ տայ հայ նախարարներու ծա-
գումին եւ Հայաստանի մէջ հաստատուելու մասին. «կարգել զպատ-
մութիւն ճշդիւ... զնախարարականաց ազգաց եւ տոհմից, թէ ո՛վ
յուժմէ եւ զի՛նչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց. եւ ո՛վ ոք ի
ցեղիցս որոշելոց՝ ընտանի եւ մերազնեայ, եւ ո՛յք ոմանք եկը ըն-
տանացեալք եւ մերազնացեալք... ի ժամանակէ անկարգ ամբարտա-
կին շինուածոյ մինչեւ ցայժմ»¹⁹:

15. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, էջ 576:

16. ՓԱԽՍՏՈՍ ՓԻԻՋԱՆԴ, էջ 187:

17. Անդ, էջ 64-66:

18. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1955, էջ 47:

19. Անդ, էջ 17-18:

Սահակ Բագրատունիի այս խնդրանքին վրայ՝ Խորենացի քաղե-
լով Մար Աբասի գրքէն մեզի կու տայ մեր բազմաթիւ նախարարնե-
րու ծագման պատմութիւնը, եւ միանգամայն պատճառ կ'ըլլայ որ
պատմահայրը գրէ իր նշանաւոր եւ անմահ գործ «Հայոց պատմու-
թիւն»ը:

Խորենացին նախարարներու սկզբնաւորութիւնը կը տանի մինչեւ
Հայկ Նահապետի ժամանակները²⁰:

Երբ Վաղարշակ Հայաստան կու գայ իբրեւ թագաւոր, հոն ամ-
բողջ երկրին տիրող մը չի գտներ, այլ բազմաթիւ նախարարութիւն-
ներ, որոնց իւրաքանչիւրը կը տիրէր Հայաստանի մէկ մասին, սու-
րով կամ ժառանգութեամբ ստացած. թէ ի՞նչ իրաւունքով եւ ի՞նչ
պատերազմներով անոնք տէր դարձած էին այս հողերուն, Վաղար-
շակ չկրցաւ գիտնալ: Բայց երբ գտնուեցաւ Մար Աբասի պատմու-
թիւնը, հայ թագաւորներու եւ նախարարներու մասին, Վաղարշակ
ուրախ եղաւ եւ հասկեցաւ որ հայ նախարարներու ծագումը շատ հին
էր, եւ թէ անոնք տէր եղած էին հողերու ո՛չ սուրով եւ բռնութեամբ,
այլ սերունդէ՝ սերունդ տոհմային ժառանգութեամբ²¹:

Այս բնական իրաւունքով կազմուած նախարարութիւններէն զատ՝
Վաղարշակ եւս կազմեց նոր նախարարութիւններ, ինչպէս կը գրէ
Խորենացին. «սահմանեաց աշխարհիս... եւ նախարարութիւնս եւ նո-
ցին նախարարութեանցն նահապետութիւնս հաստատեաց զարս պի-
տանիս, որ ի զաւակացն նախնոյն մեր Հայկայ եւ այլոց»²²: Վա-
ղարշակէն վերջ Շապուհ Պարսից թագաւորը եւս ուղած է գիտնալ
Հայոց նախարարական տուններու ծագումը եւ պատուոյ կարգը, ինչ-
պէս կը գրէ Ստեփանոս Օրպէլեան²³:

3. Ի՞ՆՉ ԷՐ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս մեր ընդհանուր տեսութեան մէջ ըսինք քիչ առաջ, նա-
խարարին առաջին իշխանութիւնը կը կայանար, իշխել իր սեփական
երկրին վրայ. ասոր համար անոնք շատ անգամ «Տէր» կը կոչուին.
«Փութացոյց գիր պաղատանաց առ Տաճատ Ընչտունեաց տէր, եւ
առ Վախրիճ Անձեւացեաց տէր»²⁴:

Երկրորդ իշխանութիւնը զոր ունէին նախարարները, էր արդա-
րութեան ատեան նստիլ եւ դատել իրենց հպատակները, որ է Դա-

20. Անդ, էջ 61-62:

21. Ան, էջ 60-64:

22. Անդ, էջ 165-167:

23. ՍՏ. ՕՐՊԵԼԵԱՆ, Փարիզ, 1850, էջ 69-71:

24. ԹՈՎԱՄ ԱՐԾՐՈՒՆԻ, Պատմութիւն Հայոց, Պոլիս, 1852, էջ 85:

տաստամի իրաւունք ունէին, եւ կրնային մահու վճիռ արձակել յանցաւորի մը դէմ. այս դատաստանական հարցերու մէջ, նոյն իսկ մեր թագաւորները չէին խառնուեր, ասիկա նշան է որ անոնք ազատ տէրերն էին իրենց երկրին եւ ժողովուրդին:

Երրորդ իշխանութիւնն էր նախարարին, զօրք համել, այնպէս որ իւրաքանչիւր նախարար իր բանակը ունէր, ինչպէս կը տեսնուի Խորենացիի գրածներէն, «Ժողովեալ նախարարացն Հայոց հանդերձ զօրօք իւրեանց, տան ընդ զնոյն Պարսից պատերազմ»²⁵: Այնչափ բացարձակ էր այս իշխանութիւնը որ նախարարները երբեմն իրարու դէմ ալ կ'ելլէին եւ իրենց բանակներով զիրար կը կոտորէին, եւ թագաւորը անոնց կռիւին չէր խառնուեր, որովհետեւ ազատ էին: Խորենացին կը գրէ այս մասին. «յարեան ազգ յազգի վերայ նախարարութիւնք կոտորել զմիմիանս, ուստի եւ երեք տոհմքն, որ Բզնունականն եւ Մանաւազեանն եւ Որդունին անուանէին, սպառեալ բարձան ի միմիանց»²⁶:

Իսկ իբրեւ պարտականութիւն՝ նախարարին կը մնար ընդհանուր պատերազմի մը պարագային իր զօրքերով օգնութեան գալ թագաւորին, բայց այս օգնութիւնն ալ ստիպողական չէր, այնպէս որ եթէ չգար՝ յանցաւոր չէր համարուեր:

Ասկէ կը հետեւի որ նախարարը միայն իր երկիրը պաշտպանելու հոգը ունէր, եւ մեր պատմութենէն կ'երեւի՝ որ բացառիկ պարագաներուն միայն նախարարները կու գային եւ թագաւորին հետ կը կռուէին թշնամիին դէմ, նոյնիսկ չմիացան արշաւանքներու ատեն: Ասոր համար է որ մեր թագաւորներու զօրութիւնը հարիւր հազարէն անդին չէր անցներ, որովհետեւ ինչպէս ըսինք, կեդրոնական կառավարութիւնը չէր պարտադրեր բոլոր նախարարներուն՝ դալ պատերազմի. այսպէս էր գոնէ Բագրատունեաց իշխանութեան օրով:

Նախարարին պարտականութիւններէն մէկն էր նաեւ հարկ տալ թագաւորին. այս մասին կը գրէ Թովմա Արծրունի. «Յայնժամ թագաւորն (Սմբատ) դեսպանս արարեալ յամենայն սահմանս տէրութեան Հայոց, Վրաց, Աղուանից, եւ առ քաղաքացիսն եւ հազարապետս, գաւառակալս, որք սիրողաբար առ նա զհնազանդութեան հարկ հարկամէին»²⁷: Եթէ նախարարը չուզէր հարկ տալ՝ ապստամբ կը համարուէր եւ թագաւորը զօրքով անոր վրայ կ'ելլէր՝ հարկը առնելու համար, ինչպէս կը գրէ դարձեալ Թովմա Արծրունի. «Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին Հա-

յոց, արդեւ առնելով հարկացն տալ թագաւորին. եւ ինքն ժողովեալ զօրս իւր Ժ. հազար արանց զօրաւորաց, եկն եմուտ յամուրս Վայոց Ջորոյ»²⁸:

Նախարարութիւնները իրենց այս պարտականութիւններով՝ գոնէ Արշակունեաց շրջանին ենթակայ էին թագաւորին. սակայն ինչպէս կը տեսնուի պատմութենէն, անոնք շատ անգամներ գլուխ կը բռնէին թագաւորին դէմ, մինչեւ անգամ կ'երթային կը միանային թշնամիին հետ եւ կը կռուէին իրենց թագաւորին դէմ, այսպէս «Աշոտ իշխանն, զնաց առ ոստիկանն Ափշին, երեւելի ընծայս ոստիկանին տարեալ... մեծագունի ակնկալեալ բարձի եւ պատուոյ, եւ վերընկալուչ զնա առնելոյ ինքնիշխան կամաց»²⁹:

Մեր թագաւորները՝ Տիրան, Արշակ եւ Պապ, միշտ ալ ջանացեր են իրենց ենթարկել ապստամբ նախարարները, եւ ասիկա նշան է թէ մեր երկիրը Միապետական կառավարութիւն էր. այս մասին էր գրէ Ս. Ներսէս. «Վարեսցի ուղղութեամբ հայրաբար խնամով առ նախարարսն, եւ նոքա (նախարարքն) մի եւս յաւելցին վտարանջել նշկահելով զնա, այլ ծառայել միամտութեամբ»³⁰:

ՊԱՀԼԱՌՈՒՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Ինչպէս տեսանք, Հայաստան բազմաթիւ նախարարութիւններու բաժնուած էր. անոնցմէ շատեր նշանաւոր ծագում ունեցած են հին ու ազնուական ցեղերէ եւ հայ ազգին տուած անուանի անձեր: Այս նշանաւոր ընտանիքներէն էին Պառլաւունքները՝ որոնք հայ ազգին տուած են անուանի զօրավարներ, մեծ եկեղեցականներ:

Մեր պատմագիրները Պահլաւունքներու ծագումը կը տանին մինչեւ Աբրահամ նահապետ. ըստ մեր պատմագոր՝ Աբրահամ նահապետ իր Քետուրա հարճէն կը ծնի վեց որդիներ, անդրանիկը Եմբան կամ Զեմբան, որ երբ կը մեծնայ՝ Աբրահամ, գուցէ Սառայի պնդումին վրայ, կը զատէ իր Սահակ որդիէն եւ զայն կը շրջէ դէպի արեւելք, ուր ան ծնունդ կու տայ Պարթեւներուն. անոնցմէ կը սերի Արշակ քաջը եւ անոր որդին Արտաշէս, որմէ Արշակ, կոչուած Մեծ, որուն եղբայրն էր Վաղարշակ: Արշակ մեկնելով «ի Բահլ» հաստատեց իր թագաւորութիւնը եւ իր սերունդը կոչուեցաւ Պահլաւ, ինչպէս իր եղբոր Վաղարշակին՝ իր նախնեաց անունով՝ Արշակունիք: Արշակ

25. Մ. ԽՈՐԵՆԱՅԷ, էջ 566-567:

26. ԱՆԷ, էջ 427-428:

27. ԹՈՎԱՄ ԱՐԾՐՈՒՆԻ, էջ 268:

28. ԱՆԷ, էջ 277:

29. ԹՈՎՀԱՆ ԿԹՂ., Պատմութիւն, էջ 216:

30. Մ. ԽՈՐԵՆԱՅԷ, էջ 513-514:

մեծ՝ 149ին (ն. Բ.) Թաղաւոր դրաւ ուրեմն Հայոց վրայ, ըստ Խորենացիի «զՎաղարշակ զեղբայր իւր Թաղաւոր երկրորդ իւր առնելով»³¹:

Խորենացի՝ Պարթեւներու, Արշակունիներու եւ Պաշլաւունիներու ցեղը նոյն արմատէն առաջ կը բերէ, բայց լաւ կ'ըլլայ, կ'ըսէ Ալիշան, զանազանել Պարթեւաց եւ Արշակունեաց ծագումը բուն ԲԱՀԼԻ սերունդէն, զոր կը կոչեն Պաշլաւի կամ Պաշլաւունիք:

Խորենացին կը պատմէ իր Բ. գրքին մէջ (գլ. ԻԸ) Մեծն Արշակին յաջորդ սերունդին մէջ եղած յեղաշրջումները: Քրիստոսի տնօրէնութեան առաջին տարիներուն, ծանօթ Արգար Թաղաւորը կ'երթայ Պարսկաստան՝ Պարթեւներու եւ Պաշլաւունիներուն մէջ եղած խռովութիւնը խաղաղեցնելու: Արգար կը յաջողի իր այս առաքելութեան մէջ, զանոնք կը համոզէ եւ կը խաղաղեցնէ երկիրը հետեւեալ պայմաններով. Պարթեւ երեք եղբայրներէն անդրանիկը՝ Արտաշէս պիտի Թաղաւորէր, իսկ միւս եղբայրներն ալ Թաղաւորէն վերջ նախապատիւ պիտի ըլլային եւ իրենց անուններով նախարարութիւններ պիտի հաստատէին: Այս պարթեւ երեք եղբայրներէն երկրորդը, որուն անունն էր ԿԱՐԷՆ, ծնունդ կու տայ Կարէմեան Պաշլաւունիներու, երրորդ եղբայրը՝ որ ՍՈՒՐԵՆ կը կոչուէր՝ Սուրեմեան Պաշլաւունիներու, անոնց Կոշմ քոյրն ալ, կին Արեաց զօրավարին՝ Ասպախապետի Պաշլաւունիներու³²:

Այս երեք եղբայրներու ցեղէն առաջ եկան ուրեմն Կարէնի Պաշլաւունիները՝ որոնցմէ են մեր Կամսարակները, Սուրէն Պաշլաւունիէն առաջ եկաւ Ս. Գրիգոր եւ անոր սերունդը: Ասով Խորենացի կը կապէ Պաշլաւունիները Մեծն Արշակի եւ անոր եղբոր Վաղարշակի զարմին:

Երրորդ դարու սկիզբները՝ երբ Արտաշիւ Սասանեան՝ Պարթեւ ազգին դէմ ապստամբեցաւ, իրեն միացան եւ այս ապստամբութեան մասնակցեցան Սուրէն Պաշլաւունի եւ Ասպախապետի Պաշլաւունիները, մինչ Կարէմեան Պաշլաւունիները իրենց բնիկ Թաղաւորին հաւատարիմ մնացին եւ չմիաբանեցան Արտաշիւ Սասանեանի ապստամբութեան: Խոսքով Հայոց Թաղաւորը որ չկրցաւ օգնութեան հասնիլ Պարթեւներուն՝ ընդդէմ Արտաշիւ Սասանեանի, երբ իմացաւ Կարէնեան ցեղին հաւատարմութիւնը, Արտաշիւ Սասանեանի վրէժխնդրութենէն ազատելու համար, զիրենք Հայաստան հրաւիրեց, որպէս զի դան եւ հոն հանգիստ ապրին: Կարէն Պաշլաւունիի փախուկտը իմանալով Արտաշիւ Սասանեան՝ անոր ցեղը սուրէ անցուց. ազատե-

ցաւ միայն մանուկ մը Պերոգամատ անունով, զոր դայեակները փախցուցին Քուշանաց երկիրը եւ հոն մեծցաւ³³:

Ասոր հակառակ՝ Սուրէնեան Պաշլաւի տոհմը, որ Արտաշիւի կողմը բռնած էր, դաւաճանեց Հայոց, որովհետեւ անոնց տոհմապետը Անակ՝ Արտաշիւէն խրատուած, բարեկամ ձեւացաւ Խոսրովի, եւ Հայաստան եկաւ ու դաւով մը Խոսրովը սպաննեց. բայց ինքն ալ եւ կողմնակիցները Խոսրովի հաւատարիմ նախարարներէն սպաննուեցան. Հայաստանի մէջ ծնած մանուկ մը միայն, իր դայեակներով, կրցաւ փախչիլ Հռոմէացիներու իշխանութեան մաս կազմող Փոքր Հայքի քաղաքներէն մէկը:

Այս երկու Կարէնեան եւ Սուրէնեան Պաշլաւունիներու ցեղերէն ազատած մանուկները մեծցան եւ Հայաստան դառնալով եղան հայ Պաշլաւունիներու երկրորդ ցեղին նահապետները:

Անակի որդին քրիստոնեաներուն մէջ մեծնալով՝ քրիստոնեայ եղաւ եւ դարձաւ Հայոց Լուսաւորիչը եւ իր հօր ցեղին անունով Պաշլաւունի կոչուեցաւ:

Իսկ Կարէնեան Պերոգամատ մեծցաւ եւ շատ կռիւներ մղեց, եւ օր մըն ալ դաւաճանութեամբ սպաննուեցաւ: Իսկ որդին Կամսար, որ իր հօր կողքին կռուեցաւ իրենց Թշնամիներուն դէմ, կռիւի ժամանակ հարուած մը առնելով զլուխէն, սկաւառակի ոսկրին մէկ մասը կորսնցուց, այսինքն՝ «բոլորութիւն դաճաթանն», ասոր համար Կամսար կոչուեցաւ³⁴:

Կամսար փախաւ եւ եկաւ Հայաստան Տրդատ Թաղաւորի օրով եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մկրտուելով քրիստոնեայ եղաւ, ինչպէս կը պատմէ Խորենացի. «Յայսմ ժամանակի ազգային նոցա Կամսար մկրտի իւրայովք հանդերձ ի ձեռն մեծին Գրիգորի, արքայի (Տրդատի) ընդունելով ի ջրոյն»³⁵: Կամսար մկրտութենէն քիչ ետք վախճանեցաւ: Տրդատ անոր անդրանիկ որդին Արշաւիրը ոչ միայն ժառանգ կարգեց անոր հողերուն եւ հարստութեան, այլ եւ տոհմապետ Կամսարական նախարարութեան. անոր ընծայեց կալուածներ՝ որոնք իր անունով կոչուեցան Արշարունիք³⁶, ինչպէս որ իր ցեղն ալ թէ՛ Արշարունիք եւ թէ՛ ալ Կամսարակաւք, եւ երբեմն ալ իրենց հին ծննդեան անունով Պաշլաւունիք անուանուեցան:

Ծանօթ է մեր պատմութեան մէջ Կամսարականներու հզօր եւ ազդեցիկ տոհմին կատարած դերը, Արշակունեաց եւ Բագրատունեաց Թաղաւորութեան շրջանին: Արշաւիր Կամսարական, Ներսէս Կամսա-

31. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն, Բ. կը, Վենետիկ, 1955, էջ 334-336:

32. Անդ, Բ. իւ, էջ 234-236:

33. Անդ, Բ. հգ, էջ 346:

34. Անդ, Բ. ձէ, էջ 389-390:

35. Անդ, Բ. զ, էջ 399:

36. Անդ, էջ 400:

րական, Հրահատ Կամսարական, Սահակ Կամսարական եւ հոսակ Վահան Կամսարական՝ Ե. դարուն մեծ դեր կատարած են եւ փառաւոր անուն մը ձգած մեր պատմութեան մէջ: Անոնք Ե. դարէն մինչեւ Է. դար իշխած են Շիրակի վրայ, եւ հոն բազմաթիւ շինութիւններ կատարած: 702ին Կամսարականներու սերունդէն նշանաւոր կ'ըլլայ Թաթուլ իշխան Վանանդացի. Ներսէս Կամսարական Ը. դարուն կը կըռուի Խազերու եւ Հոնքերու դէմ եւ զանոնք կը քշէ մինչեւ Ճորայ Պահակ, դժբախտաբար գէշ կերպով ջերմի կը բռնուի եւ կը վախճանի 748ին: Այս շրջանէն ետք անոնք չեն յիշուիր, հաւանաբար ձանձրացած Արարներու տուած նեղութիւններէն՝ քաշուած են դէպի արեւմուտք (Կիլիկիա) եւ հոն ձուլուած իշխանական տուններու հետ. այսպէս Կիլիկեան պատմութեան մէջ կը յիշուին Ալլաքարիպեաններ, որոնք իրենք զիրենք Կամսարականներու տոհմէն առաջ եկած կը համարէին»³⁷:

Իսկ Սուրէն Պահլաւունի ցեղը մեզի տուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչը, իր որդիներու եւ թոռներու մեծ հայրապետներու շարքով, եւ հոսակ Ս. Սահակ Պարթեւ, որ արու գաւակ չունենալով՝ իր միակ դուստրը Սահականոյշ կնութեան կու տայ Մամիկոնեաններու եւ կը խառնուի անոնց հետ»³⁸:

Սուրէն Պահլաւունիի եւ Կարէն Պահլաւունիի սերունդները եւ անոնց պատմութիւնը հոս չի վերջանար. հաւանաբար, կ'ըսէ Ալիշան, մէկ կամ միւս ճիւղէն, ըլլայ նաեւ կողմնակի ճիւղէ մը շարունակուած է Պահլաւունի ցեղը եւ հասած մինչեւ Ժ. դար. երբ դարձեալ երեւան կու գան Պահլաւունիները եւ նշանաւոր դեր մը կը խաղան մեր քաղաքական եւ եկեղեցական կեանքին մէջ մինչեւ ԺԲ. դար: Ըստ մեր պատմիչներու տուեալներուն, Ժ. դարու Պահլաւունիները աւելի Սուրէնեան Պահլաւունիներէն էին, այսինքն Ս. Գրիգոր Լուսաւորիչի ցեղէն:

Աւանդութիւնը եւ Գրիգոր Մագիստրոս ստէպ կը յիշեն անոնց ազգակցութիւնը Պահլաւունիներու հետ: Այս մասին կը գրէ Հ. Ն. Ալիշան. «Պահլաւունիներու արական գիծը կը վերջանայ Գրիգոր Մագիստրոսի թոռներով, բայց պահլաւական արիւնը պատուաստուեցաւ ուրիշ իշխանական տուններու հետ, որոնք իրաւացիորէն կը պարծենան իրենց պահլաւունի ծագումին վրայ: Այս պատուաստումը, ինչպէս ըսինք, կատարուեցաւ Գրիգոր Մագիստրոս Բջնեցիին երեք աղջիկներուն շնորհիւ, որոնք հարս գացին Ապիրատեանց եւ Սասունեանց իշխանական տուններուն»³⁹:

37. ԹՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 692-693:

38. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Շոթրիպի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 11-12:

39. ԱԿԻՆՅԱՆ Հ. Ն., Ազգային մատենադարան, ՃՀԹ, Վիեննա, 1956, էջ 372-373:

Ս. Ներսէս Շնորհալի իրենց տոհմին ցեղագրութեան վրայ որոշ տուեալներով՝ կ'ողէ կապը հաստատել Պահլաւունիներու հետ.

Ի Սահակայ սրբոյ սկսեալ,
Մինչեւ առ մեզ ոչ վճարեալ,
Ի յաշխարհէ ծննդեան ելեալ.
Ի հայրենեաց տարամերժեալ.
Սակայն բնութիւն ազգին պահեալ,
Որ Պահլաւիկըն կոչեցեալ,
Թէ եւ թագուն իմն ամփոփեալ.
Յռամիկ ազանց միջի ծածկեալ,
Միայն ինքեանց ներհուն եղեալ,
Որ յայսմ ազգէ գոլով սերեալ,
Որդի ըզհայր փոխանակեալ,
Մինչեւ առ մեզըս հասուցեալ...»⁴⁰:

Անիի, Շիրակի եւ Այրարատի հին վանքերուն եւ եկեղեցիներուն մէջ գտնուած արձանագրութիւններ կու գան հաստատելու եւ աւելի լոյս սփռելու այս ցեղին ծագման վրայ: Վահրամ սպարապետ, Բաբայան Գրատունեաց շրջանի ամէնէն փայլուն դէմքերէն, առաջին անգամ պատմութեան առջեւ ինքզինքը եւ իր սերունդը Պահլաւունի կը ներկայացնէ. ան շինած է Մարմաշէնի հոյակապ եկեղեցին եւ հոն ի յիշատակ իր բարեպաշտ կնոջ քանդակել տուած է հետեւեալ տողերը. «Այս է հանգիստ Սոփիայ... կնոջ Վահրամայ Պախլաւունայ»: Իսկ 1027ին դարձեալ Մարմաշէնի մէջ արձանագրել կու տայ. «Ես Վահրամ... իշխանաց իշխան անթիպատ պատրիկ, որդի Գրիգոր իշխանին Հայոց, ի ցեղէ Պախլաւունի եւ ի դարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորիչի...»⁴¹: Իսկ իր եղբորորդին Գրիգոր Մագիստրոս Բջնեցի, ողբալով իր հօրեղբոր (Վահրամ իշխանաց իշխանի) մահը, կը մաղթէ անոր. «Բազմեսցիս ի գոգս մեծին Գրիգորի (Համգէ կոչուած) հաւուն քո Աբուղամրի եւ Կամսարականն Արտակայ. քանզի ազգ սեփական եւ որդիք Աբրահամու յազգէ Քետուրական, ի գաւառէն Պարփեաց, եւ ի քաղաքէ Պահլաւ, ի ցեղէ Արշակունի, շառաւիղ մերոյն Լուսաւորիչին»⁴²: Մագիստրոսի այս տողերէն կ'երեւի որ Պահլաւունիներու նախահայրը եղած է ԱՐՏԱԿ, անոր որդին Ապուղամր, եւ թոռ Գրիգոր-Համգէ, Պահլաւ քաղաքէն, ցեղով Արշակունի⁴³:

Անիի մէջ այս նոր Պահլաւունիներու ամէնէն մեծ ձեռակերտը

40. Վիպասամուքիւմ, էջ 540-541:

41. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 148:

42. Մագիստրոսի Թուղթք, էջ 40:

43. ԱԿԻՆՅԱՆ Հ. Ն., Ազգ. Մատենադարան, ՃՀԹ, էջ 329 եւ 403:

եղած է իրենց տոհմային «Հանգստարան»ը, որ կը գտնուէր Ծաղկաձորի վրայ, Անիի արեւմուտքը: Հոս կը բարձրանայ անոնց տոհմային փոքրիկ մատուռը՝ որ Ապուղամբնց կոչուած է. երկրորդ յուշարձանը մայր եկեղեցիին արեւելքը գտնուող կլոր աշտարակաձեւ եկեղեցին է, Ս. Փրկիչ անունով: Իսկ երրորդ յուշարձանն է Առաքելոց եկեղեցին:

Այս երեք եկեղեցիներուն մէջ՝ բաւական լաւ վիճակի մէջ մնացեր են բազմաթիւ արձանագրութիւններ, փորագրուած պատերուն վրայ. ըստ այս արձանագրութիւններուն, նոր Պահլաւունիներու նախահայրը եղած է ԱՊՈՒՂԱՄՐ, որ ապրած է Ժ. դարու առաջին կէսին. այս արձանագրութիւնները հրատարակած է Ալիշան իր «Շիրակ» տեղագրութեան մէջ⁴⁴: Ապուղամբի անունով ծանօթ այս տոհմը ժողովուրդը կոչած է Ապուղամբնց: Այս արձանագրութիւններուն մէջ կը յիշուի Ապուղամբի որդին Գրիգոր (Համգէ) որ եղած է որդին Ապուղամբի, քուր Արտակի: Գրիգոր Համգէ ծնած է 941ին եւ մեռած 982ին. ասոր օրով կը սկսի այս տոհմին փառքի շրջանը. Գրիգոր՝ արձանագրութեան մէջ կը կոչուի «Իշխան Հայոց մեծաց» Պահլաւունի ցեղէն, իսկ անոր կինը, Շուշանիկ կամ Շուշիկ կոչուած է «Տիկնայն տիկին», այս երկու ամուսինները մեծ անուն թողուցեր են Անիի ժողովուրդին եւ շրջակայ գիւղերուն մէջ, իրենց բարենպաստակ դործերով⁴⁵:

Գրիգոր Համգէ հինգ որդիներ կ'ունենայ, որոնցմէ նշանաւորներն եղած են Վախրամ եւ Վասակ. Վահրամ ծնած է 967 թուին եւ Հայոց սպարապետը եղած է երկարատեւ՝ սիրուած եւ յարգուած Բագրատունիներու արքունիքին մէջ իբրեւ քաջ զօրական. ան բազմաթիւ յաղթութիւններ արձանագրած է Բագրատունեաց Թադաւորութեան շրջանին, երկար ապրած է, ականատես եղած Անիի փառքին, եւ իբրեւ սպարապետ քաջութեամբ կռուած եւ վանած է Յոյները եւ Սելճուք թուրքերը Անիի սահմաններէն: Ան նշանաւոր է նաեւ իր բազմաթիւ շինութիւններով. բաւ է յիշել իր շինած Մարմաշէնի հոյակապ եկեղեցին: Մարմաշէնի մէջ է նաեւ իր կնոջ Սոփիայի գերեզմանը, հետեւեալ արձանագրութեամբ. «Այս է Հանգիստ Սոփիայ աղախնոյ Քրիստոսի, կնոջ Վահրամայ Պահլաւունոյ իշխանաց իշխանի, դստեր Տիգրանայ Հայոց մարզպանի» (տե՛ս Երբակ, էջ 149):

Նոյնքան անուանի եղած է նաեւ Վահրամ սպարապետի եղբայրը՝ Վասակ Հոյուն սպարապետ, որ կ'ապրէր իրենց տոհմին սեփա-

կան՝ Բջնիի բերդին մէջ եւ իր քաջութեամբ մեծ անուն հանած էր եւ պաշտպանած իր հայրենիքը եւ Անին: Արաքներու դէմ Սերկելիի պատերազմէն վերջ՝ երբ յաղթական կը վերադառնար, զժբախտ պատահարի մը զոհ գնաց այս անյաղթելի քաջը, սուգի մատնելով ամբողջ իր ընտանիքը: Ան երբ յոգնած կը քնանար ժայռի մը շուքին տակ՝ այլազգի մը դայն տեսնելով սպաննեց 1021ին: Վասակ Հոյուն շինած է Անիի Ս. Փրկիչ եկեղեցին⁴⁶:

Վասակ Հոյունի որդին եղած է Գրիգոր Մագիստրոս, որ ԺԱ. դարուն ապրած է եւ անուանի եղած է իր գրութիւններով. ան արուղաւակներու յաջորդութիւն չունենալով, իր երեք աղջիկները ամուսնացուցած է հայ ուրիշ իշխանական տոհմերու հետ, կողմնակի գծով շարունակելով Պահլաւունի սերունդը:

Այս Պահլաւունի մեծ իշխաններու սերունդին հետ կը յիշուի կողմնակի գծով ՀԱՍԱՆ անունով իշխան մը, որուն հայրը յայտնի է, իսկ անոր որդիները եւ թոռները ծանօթ են եւ որոնք Պահլաւունի միւս տոհմին հետ խնամի եղեր են. Հասանի որդին Գրիգոր Ապիրատ Ա. Կեջառուքի եկեղեցին շինած է, ասոր որդիները եղած են Ապիրատ եւ Վասակ. այս երկու եղբայրները իրենց կէն առած են Գրիգոր Մագիստրոսի երկու աղջիկները եւ խառնուած անոնց տոհմին հետ: Այս երկու եղբայրները կ'ըլլան Ծովքի Պահլաւունիներու նախահայրերը. Ապրահայ կ'ապրէր Անիի մէջ, իսկ Վասակ Բջնիի մէջ, Անիի Թադաւորութեան կործանումէն վերջ՝ Ժամանակ մը եւս անոնք հոն կը մնան, բայց տեսնելով որ շարունակ այլազգիներու յարձակումներուն ենթարկուած են եւ վտանգի տակ, Ապրահայ կ'առնէ իր որդիները Ապիրատ (Շնորհալիի հայրը) եւ Վասակ ու կ'ապաստուի Զորրորդ Հայք, աւելի ապահով շրջան մը, բնակուած Հայքէ տանի քրիստոնեաներէ: Ապրահայ հոն իր քաջութեամբ կը տիրանայ եւ քրիստոնեաներէ: Ապրահայ հոն իր քաջութեամբ կը տիրանայ Խարբերդի մօտ եղող Ծովք դքսակիմ, իսկ Վասակ կը գաղթէ դէպի Եգիպտոս:

Ապիրատ Ծովքի մէջ կ'ունենայ չորս զաւակներ. Գրիգոր, Վասիլ, Ներսէս, Զօրավար եւ աղջիկ մը Մարիամ: Այս չորս եղբայրներու մասին երկար գրած է Հ. Ն. Ակինեան⁴⁷:

Ապրահայի մահէն ետք Ծովքի տէր եւ իշխան կ'ըլլայ ԱՊԻՐԱՏ. հոս եւս կը հասնին այլազգիները եւ պատերազմներ կը մղեն Ծովքի դղեակին շուրջ: Ապիրատ երբ օր մը Ծովքի պարիսպներուն վրայ ելած կը քննէր շուրջը, ծովէն պահուրտած թուրքի մը նետէն կը վիրաւորուի եւ կը վախճանի:

44. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Երբակ, էջ 148-149, 110-121: Հմմտ. ԼԵՕ, Պատմութիւն, էջ 654:

45. Անդ, էջ 52, 148: Հմմտ. ԼԵՕ, Պատմութիւն, էջ 664:

46. Անդ, էջ 53: Հմմտ. ԼԵՕ, էջ 664:

47. ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., Ազգ. Մատենադարան, էջ 380-389: Հմմտ. ԼԵՕ, Պատմութիւն, էջ 501:


Այսիրատի որդիները, տեսնելով որ Ծովք դղեակը եւս իրենց ապահովութիւն չի տար, եւ իրենք միշտ վտանգի մէջ են, կը թողուն Ծովք դղեակը եւ կը գաղթեն դէպի արեւմուտք, դէպի Կիրիկիա :

Այդ շրջաններուն մէջ ապրող հայ իշխաններու մօտ՝ անոնք պաշտպանութիւն կը գտնեն եւ կը հաստատուին Գող Վասիլի հողերուն վրայ, դղեակի մը մէջ, զոր կը կոչեն իրենց պապենական դղեակին անունով Ծովք դղեակ, եւ ժամանակ մը հոն կ'ապրին Գրիգոր Գ. կաթողիկոս եւ իր եղբայրը Ներսէս: Ծովք դղեակը եւս անապահով գտնելով, Եգեսիոյ կոմսէն կը ստանան Հռոմկլայ բերդը Եփրատի արեւմտեան ափին վրայ եւ հոն կը փոխադրուին: Հռոմկլայ երկար ժամանակ Հայոց կաթողիկոսարանը կ'ըլլայ⁴⁸:

Վասիլ՝ Շնորհալիի եղբայրը, այս շրջանին մէջ տէր կ'ըլլայ Կարկառ բերդին, Շահան Զօրավար Եգիպտոս կը գաղթէ, եւ երբ Կիլիկիոյ մէջ կը հաստատուի Ռուբինեանց իշխանութիւնը եւ ապա Թազաւորութիւնը, անոնք եւ իրենց որդիները եւ թոռները մեծ ծառայութիւն կ'ընեն Կիլիկեան Թազաւորութեան. Գրիգոր իբրեւ կաթողիկոս 1113-1166, մեծ համբաւ կը ձգէ եւ Կիլիկեան իշխանութեան մէջ մեծ ազդեցութիւն կ'ունենայ: Իր մահէն ետք 1166ին Հայոց կաթողիկոսական թրոռին վրայ կը բարձրանայ իր եղբայրը՝ Ս. ՆՆՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Պահլաւունի տան ամէնէն փայլուն դէմքը, Հայ Եկեղեցւոյ պարծանքը, որ բազմաթիւ գրութիւններ թողած է եւ պայծառացուցած Հայ Եկեղեցին եւ անուանի եղած Բիւզանդիոնի կայսրներուն առջեւ:


Պահպանողականությունը ուրիշ ճիշդ մը եւս չարունակուած է Սասունի մէջ, ուր Գրիգոր Մագիստրոսի երրորդ զուտը հարս գացած է, ապա կորսուած անոր հետքը:

Է. ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ



48. ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Պատմաուսման, *Երուսաղէմ*, 1869: Հմմտ. Ապինեան, էջ 386:

ՆՈՐ ՊԱՀԱՆՈՒՆՆԵՐԸ



ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՀԱՆՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԱՊՈՐԱՏԱՆՆԵՐ

